ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2013թ. թիվ 96-Ա

ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված ներքին աուդիտի աշխատանքների արդյունքների՝ աուդիտորական հաշվետվությունների և եզրակացությունների քննարկման նիստի թիվ 2 արձանագրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ֆինանսական խախտումներ թույլ տալու և ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու համար 2013թ. հունիսի 11-ից լուծել ՀՀ Լոռու մարզպետի և «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Անահիտ Մանուկյանի միջև 2011թ. դեկտեմբերի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Անահիտ Մանուկյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ պատվիրված փոստով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. հունիսի 11
ք.Վանաձոր